


ԲԱԺԱՆՈՐԻԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար
արեւելի 12 ֆր.
վեցամսեայ 7 "
Արսասահմանի
համար արեւելի 15 ֆր.
վեցամսեայ 8 "
Աւերիկայի համար
արեւելի 3 շր.
վեցամսեայ 1.50 "

Ծանուցանի տողը ա.
նաջին երեսին համար
40 սանթիմ իսկ վերջին
երեսին համար 20 սան-
թիմ է: Կրկին աւելի
անգամներու համար
20 0/0 գնից կը լայն:

Վառիայի համար մեկ
ֆ 10 սանթիմ է



Համակ է գրավ
դրիչ խմբագրութեան
հասցիից

Редакция на вѣстникъ
"Шаржунъ"
Варна

Redaction du journal
"Charjoum"
Varna (Bulgarie)

Պուշկարիոյ համար
մեկ ֆ

15 ՍԱՆԹԻՄ
Արսասահմանի համար
մեկ ֆ

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք եւ չնկ
տուիք

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅՅԻՆ. ՔԱՂՍՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՅՈՒՆ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

ՇԱՐՅՈՒՆԻ ԲԱԺԱՆՈՐԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՃԵՆԳԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱԿԵՒԻ ԿՃԱՐԷ

«ՏԱՌ ՏԱՐԻ Հ. Յ.

ԳԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԷՋ»

Արդէն այս անունով բը
բոջիւրը յանձնված է ապագ-
րութեան:

Իրոջիւրի նպատակն է, առանց
խճճանքի Գաշնակցութիւնը
մէջ տեղ գնել իր իսկութեամբ
և միեւնոյն ժամանակ փաստել
թէ՛ իմ պայքարը սկսված է շատ
հին ժամանակից և վերջերս
միայն սուր կերպարանք բնու-
նեց. Բնական է որ բոջիւրի
մէջ փաստող դոկիւմանները
մեծ տեղ պիտի գրաւեն:

Իրոջիւրի գինը ապագրութիւ-
նից վերջ 3 ֆրանկ է լինելու.
Իսկ բաժանորդ գրվողի համար
2.50 ֆր.:

Գինը «Շարժում»-ի նմարագրութեան

Café Promenade Vienne

Այս շքեղ ք. ֆէն կը գրա-
նուի Վիէննա Թրանց Ժողովրդ
բաժին վրայ. կը ստանայ վաճա-
ղան հայերէն խմբիկեր. Առ հա-
սարակ բոլոր հայ կամարեւելք
ցի վաճառականները այս տեղ կը
յաճախեն. Ուստի օտար երկիր-
ներէ եկող հայերը կը հրաւիր-
ուին դիմել հոս, ուր պիտի
գտնեն իրենց յարմար դիւրու-
թիւններ և անհրաժեշտ տեղե-
կութիւնները:

ԲՈՒԼԳԱՐԻՈՅ ՀԱՅ ՈՒ-
ՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Բուլգարիոյ զանազան քաղաք.
ներից արդէն ուսուցիչները հա-
ւաքվել են Վարնա. հրաւիրված
ներից հազիւ մի-երկու հոգի
պակաս են. Այս առաջին փորձը
պէտք է լինի բուլգարահայ մա-
նուկներին կրթողների կողմից,
և ի հարկէ բրբեւ առաջին փորձ
կարող է շատ թերութիւններ ու-
նենալ. բայց նշանակութիւն
չունի. ինչ որ նոր է—փորձ է—
զերծ չի լինի թերութիւններից:

բաւական է որ հաւաքվող ուսու-
ցիչները զեկավարվեն միայն
բուլգարահայ մանուկ սերնդի
կրթութիւնը գրական հիմքի
վրայ գնելու ոչ միայն տեղում,
այլևս հաստատուն կամքով:

Ի դուր նախաձեռնարկները
չեն հրաւիրել և ուսումնահայ
ուսուցիչներին... ուսումնահայ
գարոցներն էլ և ուսուցիչներն
էլ այդպիսի մի խորհրդակցող
ժողովի պէտքը ունենին. ու եթէ
այս անգամ այդպէս չէ եղել,
գտնէ ներկայ համագումարը
պէտք է որոշէ որ երկրորդ հա-
մագումարին ուսումնահայ ուսու-
ցիչներն էլ հրաւիրվեն:

Ի հարկէ համագումարի առա-
ջին պարտականութիւնը պէտք է
լինի մաքառել բուլգարահայ
գարոցներում տիրող աւանդա-
կան մի քանի անախորժ սովոր-
ութիւնները, որոնք թէ ու-
սուցիչներին են փշայնում և թէ
սշակերտներին:

Տեղեկանում ենք որ Վարնայի
ազգային գարոցի ուսուցիչներից
մի քանիսը մերժել են այդ ժո-
ղովին մասնակցել. ճշմարիտ որ
զարմանալի է. եթէ կարծում են
որ շատ կարող մարդիկ են. ա-
ւելի լա... աւելի օգտակար կը
լինէին այդ անդամիկ համա-
գումարին...

Համագումարին մասնակցող
ուսուցիչներին բարի գալուստ
մաղթելով. ցանկանում ենք յա-
ջողութիւն և որքան կարելի է
ընչ խօսք և գրական գործ:
ՎԱՐՆՈ

ԲՐՈՑԷՍՈՐ ՄԻԼԻԿՈՎԸ
ԵՒ
ՏՈՒՄԱՅԻ ԼՈՒԾՈՒՄԸ

Այս գիտնականը որ սահմանադ-
րական տեժօկրատներու վարիչ-
ներէն մէկը և գործօն անդամն
է «Խանի» Պետերսբուրգի թրդ-
թակցին յայտարարած է հետեւ-
եալը.

—Պետական յեղաշրջումը ան-
սպասելի չէր տեժօկրատներու

համար. թէեւ տեղի ունեցած
ժամանակը սպասուած չէր. Ա-
նոնք կը կարծէին թէ այդ դէպ-
քը տեղի պիտի ունենայ քանի
մը օր ուշ. Կառավարութիւնը
յեղաշրջումը կիրակի օր կատա-
րեց խուսափելու համար խոռ-
վութիւններէ, որ կրնային տեղի
ունենալ Տափրիկեան պալատին
մօտ... Սահմանադրականները
կընդունին որ թագաւորը իրա-
ւունք ունի կազմաւուծել Տուժան,
սակայն հակասահմանադրական
կը գտնան նոր տուժայի հաւաք-
ման համար նշանակուած ժամա-
նակամիջոցը. որովհետեւ այդ
ձեւով կառավարութիւնը պիտի
կարենայ հաստատել 1907ի ելեւ-
մտից հաշուեկշիռը առանց ազ-
գային երեսփոխաններու: Պարզ
է որ այս գործը կը նկատուի իբ-
րեւ. բացառիկ զինուորական
գործ և հետեւանք է կառավա-
րութեան տուժայի երկրագոր-
ծական ձրագիրներու հակառա-
կութեան. ինչպէս և արդիւնք
տուժայի հետզհետէ երկրին և
մանաւանդ զինուորներուն վրա
ձեռք բերած ազդեցութեան:
Յայտնի բանակցութիւններէ
վերջը կառավարութիւնը ըմբռ-
նեց թէ անօկրատ սահմանադ-
րական նախարարութիւն մը հը-
նարաւոր է միայն հետեւեալ
պայմաններու մէջ. մեծ կալուա-
ծատէրերուն հողերու հոնրու-
թեան վերածելու լիովին ներու-
մէն մահուան պատիժը վերցու-
նելէն, վարչական իշխանութեան
վերանորոգելէն, բացառիկ օրէնք
ներու և զինուորական ատեանին
վերացուելէն. Տուժայի ելեւմտա-
կան իրաւունքները ընդարձա-
կելէն և պետական խորհուրդը
բարեփոխելէ վերջը:

Կառավարութիւնը այդ պայ-
մանները չընդունեց. Ո՞րնչ գեռ
ինքը պետական յեղաշրջումը
կատարելէն վերջը գործունէու-
թեան որոշ ձրագիր մը չունէր:
Գահիճը կերպազէր որ ուսու ժո-
ղովին մերժելով սահմանադրա-
կան օրէնքը պիտի կարենայ
պիւրօկրատներու և ազատական

խմբերու քանի մը ներկայացու-
ցիչներու օգնութեամբ ազատա-
կան բարեփոխումներ կատարել:
Սահմանադրականները չեն կրը-
նար այդպիսի գահիճի մը մաս-
նակցել:

Սահմանադրականները ծայ-
րայեղ ձախակողմեաններու կար-
ծիքն հետ համաձայն չեն թէ
յուլիս 9էն յետոյ տուժան կրնայ
օրինաւորապէս գոյութիւն ու-
նենալ և որոշումներ տալ, բայց
սահմանադրականները իրաւունք
և պարտականութիւն ունենին ժո-
ղովրդին գահիճի 7 ամիս ա-
ռանց երեսփոխանական ժողովի
երկիրը կառավարելու բրած
փորձին անխուսափելի հետե-
ւանքները ցուցնելու:

Կարելի է որ կառավարու-
թիւնը կարեւոր զինղութիւններ
ընէ. քաղաքական ապստամբու-
թեան վերաբերմամբ ինչպէս և
ընդհանուր ձայնաւորութեան.
բայց անկարելի է որ այդ ընէ ա-
ռանց տուժան ժողովի հրաւիրե-
լու. որովհետեւ հիմնական օ-
րէնքները ցարին ընտրական օ-
րէնքը փոխելու իրաւունք չեն
տար. կառավարութիւնը անմը-
տաբար քաղաքական, առանց
սահմանադրական ելքի կացու-
թիւն մը ստիղծեց և քաղաքա-
կան պայքարի համար պետական
յեղաշրջումը միջոց դարձնելու
վտանգաւոր պատիւին արժանա-
ցաւ:

ԲՈՒՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ՆՈՐ ՇԱՐՅԱՆ

(Երոպացիի մը նամակէն)
ՏՐԱՊԻՉՈՆ, յունիսի 7

Մայիս ամիսը որ Երոպայի մէջ
ուշադրութիւն գրաւող ամիսն է,
Տրապիչոնի մէջ ալ հայ կեանքին
համար նշանակութիւն ունեցաւ այս
տարի իր թեզմաւոր հանգամանքովը.
Ստոյն սկիզբները ուստիկանական
պոչտօնեաներ գնացին հաստատեցան
քաղաքէն մկկ ու կէս ժամ հեռաւոր.

բուժիչն ունենցող Չէֆանու կուլած գիւղը, սկսան բռնութիւն ի գործ գնել պահանջելով որ Ռուսաստանէն նաւակով վերադարձած զէֆանուցիին իրենց յանձնեն; Գիւղացիք իզուր կաշխատեն համոզել թէ իրենք տեղեկութիւն չունին; Օգուտ չընեն, վերջապէս բաւական ձեռնէ վերջ կը տեսնեն թէ քան մը դուրս չգար այս ընթացքէն, կառնեն իրենց հետ քաղաք կը տանեն միմար Արթին, Պողոս կարագուլան, Յովսէփ և Մինաս Յովակեան, շանացի Կիրգոր և կը բանտարկեն: Ուրիշ գիւղացիք կը տեսնեն որ այս բանտարկութեան վերջը չպիտի գայ, կաշառք տալով կազատին բանտէն:

Ասոնց բանտարկութենէն յետոյ՝ ոստիկանական պաշտօնեաներ կերթան 4-5 ժամ հեռաւորութիւն ունեցող Ճօշար և կիւլանս գիւղերը և կը պահանջեն որ ցոյց տան տեղը այն ընկերք թուրք նաւակներն, որ նաւակով հայ կը փախցնէ Պաթում և իբր թէ այդ գիւղերը պահած է եղբր: Կը ձեռնեն և կապառնան, սակայն արդիւնք մը դուրս չգար Սյն ատեն ճօշարացի և կիւլանացի միմարները եւ գիւղական խորհրդի անդամները իրենց հետ առնելով քաղաք կը բերեն և կը բանտարկեն Նոյն ատեն կը փնտռեն շանացի բահանայ Արիստակէս թրլաքեանը՝ բանտարկելու համար, սակայն նա տեղ մը հիւանդ պատկած ըլլալուն՝ ձեռք շանցնիր և կազատի այս բանտարկութենէն (արդէն երկու տարուան մէջ երկու անգամ շրանտարկեցին յիշեալը՝ առիթներէ օգուտ քաղելով): Կառավարութիւնը տեսնելով որ այս ձերբակալութիւնն ալ արգիւնք մը չտուաւ, կալծակէ վերոյիշեալները՝ խստիւ պատիրելով որ ասկէ ետքը եթէ իրենց գիւղերէն մէկը փախչի Ռուսաստան և կամ հոնկէ վերադառնայ, անիջապէս լուր տան կառավարութեան:

Ասոնցմէ յետոյ կարգը կուղայ Չիգուկաս գիւղին, ուր իբր թէ Ռուսաստանէն վերադարձած գիւղացի մը

կայ եղբր հոն կերթան ոստիկանութեան պաշտօնեաներ, երբ կը տեսնեն թէ իրենց սպառնալիքները, բռնութիւնները օգուտ չեն ընել, կառնեն կը բերեն հայ միմար, գիւղական խորհրդի անդամները, խնդրոյ առարկայ եղող գիւղացիին հայրը և թուրք միմարը: Հոս կը սպառնան անոնց և ճշտում ի գործ կը դնեն, որպէսզի ստորագրեն պատրաստած գրութիւն մը: Այդ գրութեամբ կուղեն հաստատել թէ Տրապիզոնէն առաջնակարգ հայ դերձակ մը Յովհաննէս Փաշաճեան պահած է այդ փախստական հայ գիւղացին: Գիւղացիք հակառակ եղած ճշտումին, չեն ստորագրեր այդ խարճական վաւերագրութիւնը և հետեւաբար կը բանտարկին: Գրանք մը օր բանտը մնալէ յետոյ, կը կը համոզին թէ անոնց կաշառքի չպիտի կրնան ազատիլ այս վերահայն, կը վճարեն պահանջած գումարը և կերթան իրենց աները:

Ամսոյս 13/26-ին զիշերը խումբ մը հայեր, անգործութենէ և ալ պայմաններէ սղւած, Պաթում պիտի մեկնէին թուրքի մը նաւակով: Կառավարութիւնը լուր կառնէ և Նոյն գիւղերը տեղեկանալով կը ձեռնարկէ 25-30 հայեր, մեծ մասաւոր Պայպուրթի գիւղերէն: Ծրագրողները գիւղերէն կուղեն և կը փախչին, երկրին ծածօթ ըլլալուն պահառաւ: Հետեւեալ օրը ստոնք բոլորն ալ կ'աքորեն, ըստ ստանքի իրենց գիւղերը, ըստ ստանքի՝ կ'ալալը զիշերը, որ ասկէ 3 օր հետոյ է:

Մայիս ամիսը այնքան կարեւորութիւն մը չպիտի ստանար քաղաքի համար եթէ համիդեան վարչութիւնը իր մտկոլութեան մէկ խնդր բարբարոսութիւնն է ի գործ չդնէր հոս... Ամսոյս 11/24-ին, հայոց Համբարձման ատի յիշերը, կ'ս գիւղերէն 2 ժամ ետքը, քաղաքին աստիճան կարգ և որ հրապարակ վրայ, պորտոցիկ առջեւ, կ'առաջան բարձրացուցին 24 տարու համարելի հայ երիտասարդ

մը, Համբարձում Ուրուշեան, որ երկու տարի առաջ իբր յեղափոխական մահուան դատապարտուած էր մարտական խումբ մը կազմակերպելուն և սրիկայ մը սպանած ըլլալուն համար: Չմոռանալով ըսելու որ նոյնիսկ սուկական պատժական օրինազրքին յօգուածները նման յանցանքներուն համար երբէք այդքան ծանր, բարբարոսական պատիժ մը չեն տրամադրեր: Սակայն ծայրայեղ հայատեազ և փառամոլ ընդհանուր դատախազ Էմիլ Լուսիկի պէյ՝ անհնար չոց ի գործ դրաւ այդ պատիժը սօրիշու համար, և յաջողեցաւ ինչո՞ւ չյաջողիր արդեօք Համիդը պիտի խզմար հայ տղային և չպիտի ուզէր ատանկ անիրաւ իրաւէ մը հանելու: Չորս ժամ կախաղանին վրայ կը թողուն արդարութեան համար կուող հայ երիտասարդին անշնչապէս զիտկը և յետոյ կը ձգեն բեռի սայլ մը մէջ և կը տանեն կը թաղեն հայ տէրտէր ուղեկցու թեամբ: Չորս ամիս օրուընէ ձեռք անցուցած էին, Հակառակ օրէնքին՝ զիտկը շեն յանձնելու իր ծնողքին Կախաղանի վրայ իսկ, համակրելի երիտասարդը «կիցցէ յեղափոխութիւնը» կը գորչ և երբ կը շարունակէ այս մտօք խօսել սեւ հըրամանը կը սրբի և անմիջապէս կը վերջանայ բազմատանջ կեանքը:

Հայ տարբին վրայ շատ խոյունկ սպառնութիւն կը թողու այս խըժղութեանը, Տաճկաց մէջ ալ շատեր կը գտնեն, որ չեն արտօր լզածէն: Տարաբախտաբար, յոյներուն մէջ շատեր կ'երեւան, որ չեն բողոքեր այս օրինակ բարբարոսութեան դէմ, և նոյն իսկ առիթին կ'օգտուին՝ ալ անիլ մտնենալու ստոր կառավարութեան...

Կառավարութիւնը քանի մը օրէն իվեր լոկի հակուղութիւն մը կը կատարէ և ասկէ վեց օր առաջ ալ Պիթպազի կուլած շուկային մէջ զէնք ծախող թուրքի խանութները խուզարկեց և բաւական ատրճանակներ ժողովեց: Ոմանք կ'առնուին լուր առնելով՝ հրացաններ և մեծ քանակու-

թեամբ ատրճանակներ պահած էին; Չը հասկցելով թէ Համիդի ներգաւմտութիւնը ի՞նչ նոր խաղ պիտի խաղայ անախտ, անպաշտպան հայերու վրէժի, տարր մը որ եթէ հանգիստ թողի, յառաջդիմութեան բարգաւաճման առաջնորդ մը պիտի ըլլայ նոյն իսկ թուրք ժողովրդին և աս մեր՝ բոլոր երոզացիներուս խորին համոզմունքն է ինչպէս և անոնց, որոնք քիչ շատ կը ճանչնան փոքր-Ասիան:

ՀԱՄԵՊ, 31 մայիս

Չէյթուրի զօրանոցի մէջ գրուելու թիւրք զօրքերու մէջ համաճարակ հիւանդութիւն կը տիրէ: Կօրքի մեծ մասը Մարտի փոխադրուած է և մնացած մասը զօրանոցէն դուրս՝ վրաններու տակ կը պահեն: Այս գէպը սարսափելի մէջ կը պահէ տեղային և շրջակայքի կառավարութիւնները, որ սկսեցին Զէյթուրի աշըքի վարչոյ կարեւոր անձնաւորութիւնները Չէյթուրէն հեռացնել զանազան պատրաստութեանը և բանտարկել հոս և մի մասն ալ Մարտի, Բոլոս, շրջակայքի մէջ: Խուզարկութիւններ և ձերբակալութիւններ անպակաս են, և ձերբակալածները, շատ քիչ բացառութեամբ, կը բերին այստեղ:

ՎԱՆ, 6 յունիս

Սեր վիճակը առայժմ խաղող է: Առհասարակ մեծ և ցնցող զէպքեր տեղի չեն ունենար, բայց տուրքերի և այլ տեսակ խստութիւնները կը շարունակուին:

Էրզրումի զէպքերը այստեղի թուրքերու վրայ զժախտաբար

Մ. Յ Ո Ւ Ա Կ

Ա Ր Ժ Ո Ւ Ը Դ Ս Պ Ա Տ Ե Ա Ն Ե Ի

Ա.

Պ Ա Տ Ր Ա Ն Ք Ը

(Խորհրդահայ կեանք)

Բոլոր մարդոց զէմքերը ճշմարիտ են, ի՞նչ ալ իրենց ձեռքերն ըլլան:

Այլ չկայ երբէք ճշմարիտ կին մը՝ ճշմարիտ զէմքով:

ՇԵՅՔՍԻՐ

5

Գ.

Օրբորդը ճիգ մը ըրաւ երիտասարդին պրկումէն խոյս տալու, բայց չը յաջողեցաւ:

—Թող զիս, գոչեց. թող զիս. բաւական է որ այքան տարի, թող, մի նեղեր. թուալէթս պիտի աւրես: Բարեկամներ եմք փայն յայտնեմու ուրիշ ոչինք... —Ա՛հ, փախող թռչուններուն թեւերը պէտք է կտրել, որպէս զի վանդակէն չը թռչին: Բարձրացուր քօղը, անա հաւատարմութեան երաշխաւորութիւնը, կուզեն զեռա-

ւելի... միջնաճաշ մը, սիրոյն պըտոյս մը Պուան, ապա ազուոր ճաշ մը, հաճելի երեկոյթ մը Սթէրա գօմբե և, հուսկ ուրեմն, անուշ նիւշ մը... հաշտուեցանք հիմա, է՛հ, օրիորդ նախանձու:

Այս անգամ ժպտեցաւ Անժէլ. վերջապէս, իր փրկարկեցող ոյժը խախտած չէր. երիտասարդը զեռ իր հեղ ստրուկն էր, լոկի կ'ստակատարը, չէր սիրահարը: Եթէ ներելի է ըսել, կարծես Նոյն իսկ զգաց խղճութայ թիւման բան մը, որ հնարած անմիտ պատմութիւնով մը ջանացած էր գտնութիւն յառաջացնել: Որքան անրոզող համակերպում, որ բառ մը անգամ արտաբերած չէր իր վարձուքներու մասին. որքան ներող ու շուքուած հոգի՝ որ ջանացած էր փակել վէճը յանցանքին ծանրութիւնը իր վրայ առնելով, առանց անոր զգալութեանը վիրաւորելու:

Հոգիներ, որքան ալ ինկած, որքան ալ դաժան, անողք, անգուր ու անխիղճ, յաճախ եթակայ են. հոգեբանական անբացատրելի պայմաններու ներքեւ, փոխուելու, այլակերպուելու և նոր երեւոյթի մը ստանալու, ըլլայ այդ ժամանակաւոր թէ մշտնջենական, ճշմարութիւնը կը մնայ անփոփոխ:

Անժէլ հանելուկային տիպ մըն էր: Իշխող, բնապետական, քմավար, միանգամայն նախանձու, յորդելով երիտասարդ Արսէնի բաժակը մինչեւ յուսահատութեան աստիճան յանկարծ սիրային այնպիսի արտահոսում մը կուրենար, որ նոյն իսկ զղջալ կուտար գինք պաշտողին կրած տագնապներ: Ասոնք իր կրայոյդ խանդավառ ժայթքումներն էին, որոնց երջանիկ էր հանդիպողը:

Անժէլը, բնապետական, քմավար, միանգամայն նախանձու, յորդելով երիտասարդ Արսէնի բաժակը մինչեւ յուսահատութեան աստիճան յանկարծ սիրային այնպիսի արտահոսում մը կուրենար, որ նոյն իսկ զղջալ կուտար գինք պաշտողին կրած տագնապներ: Ասոնք իր կրայոյդ խանդավառ ժայթքումներն էին, որոնց երջանիկ էր հանդիպողը:

—Սխալ էի, ըսաւ, քեզ վրայ անընդհատ սիրելի ես դու... Միայն, միայն այդ խոյոր լեզուդ տին հետ մի երթար, մի խօսիր. զիս կը գոյրացնէ դա:

—Այ միայն էնոր, այլ և ուրիշի հետ ալ չես խօսիր, անմահ հոգեակս, եթէ այդ պատճառ մը է որ մեր հանգիստը խողովէ: Օ՛ն, համար միտ ես տուած ծրագրիս, լաւ ուրեմն, ցատկէ:

Ու այսպէսով երկար ժամանակներէ ի վեր խոզված ու շարմիտ հոգին Անժէլի՝ զուարթացաւ. երկարեց դուրսը Արսէնի, որ էնոր կարագային ծոծկակին վրայ երկար, սարփատենչ համբոյր մը գնելով

Թեւակրիս կ'ան գուրս:

Դ.

Շէյքսպիրի սրամիտ հերոսուհիներէն մէկը, Սօֆիլինտ, բնտիր հատուած մը ունի իր սիրահարին: —Մարդիկ Ապրիլ են՝ երբ կը սիրաբանին, Դեկտեմբեր՝ երբ ամուսնանան. կոյսեր Մայիս են՝ երբ կոյս են անոնք, այլ օրը կը փոխուի՝ երբ դառնան կինս:

Ար էն ու Անժէլ թէ և օրինաւոր ամուսնութեան մը չեն խաղաղուած, գաղտնաբերուած էին միեւնոյն բաղդին: Այլիկը յոգնած էր երիտասարդէն. դա պայք ու բացայայտ ճշմարտութիւն մըն էր: Սակայն երիտասարդը, խանդավառ արեւելցիի մը հոգիով, անքակտելիորէն կատարած էր Անժէլի: Եթէ իր Բայիգ ժամանակէն քանի մը ամիս վերջը հանդիպէր այս աղճկան, թերեւս, ուսումնասիրած ըլլալով տեղական իրականութեան արական սեռի հոգեբանութիւնը, չը մղուէր այսպիսի կոյր հետեւողութեան: Իայց մէկ, իր թիւրքացիի միամիտ համոզումներով և վերամբարձ ինտելիկետով և վերամբարձ ինտելիկետով ապագայ կենդանի իր վանաները բազմաքանակէն քիչ շատ կը ճանչնան փոքր-Ասիան:

չանդրադարձան, աստիք ոչ մի շարժում ցոյց չտար մինչև այժմ:

Հասցի գինը սխառ է իջնել, ցանքերը լաւ կերտելն, Տեանենք գիւղացին այս տարի կուշտ հոգ պիտի ուտէ:

ՄՈՒՇ, 21 սպրիլ

Կարնոյ մէջ տեղի ունեցած ժողով գային ցոյցերը հոս ալ ազդու տպաւորութիւն թողին: Տարաբախտաբար մանրամասնութիւններ կը պակսին: Կռաւով րուծիւնը միջոցներ ձեռք առած է, որ լուրը չը տարածի:

Մեր կողմի համար մխիթարական բան մը չունինք: Մեր անհուն ցաւերի մասին կրկնութիւնները՝ գրեթէ արտամաշ են եղած: Տնաքանդ հարկահաւաքութիւնը կը շարունակուի, ժողովուրդը կը շարժական հարստութիւնէն զրկուելի վերջ՝ հիմա ալ կը զրկուի հոգեբէն: Գունդագունդ կը գողթեն տնով տեղով, այլեւս գիմա նալ անկարելի է: ապրելու միջոց չկայ: Իմում, բողոք, գանգատ նշանակութիւն ամենեւին չունին: անոցք բռնութիւնը իր արհաւիրքն ու քայքայիչ գերը կը շարունակէ:

ՏՐԱՊԻՉՈՆ, 8 յունիս


Ամսոյ 10/23 ին Էրզրումէն հասան Պօլսէն զրկուած քննիչները: պետական խորհրդի (չուրայի ղէկէն) անգամ Մուսթաֆա պէյը և Գուշի նախկին կառավարիչ Հիւսնի պէյը, և նոյն օրն իսկ նաև նստելով՝ ճամբայ ելան Պօլիս իրենց քննութեան համարը տալու համարական Արդա-

րադատ վարչութեան: Երբ ասոնք Էրզրում հասնելով քննութեան ձեռնարկեցին, իրենց կողմէն շնորհեցին զինուորական վարչութեան պաշտօնատուներ և սխառ հոն կանչել ժողովրդէն այլևայլ անհատներ: Ժողովուրդը բողոքեց այս ընթացքին դէմ և պահանջեց որ քաղաքացիական թեմայի անդամները կատարի քննութիւնը և սպառնացան, որ եթէ այս առթիւ մէկը ձերբակալուի, անմիջապէս անդրիական գրոշ պիտի պարզեն, մտահ լինելով որ «ինկիլիլը» իսլամները աւելի կը պաշտպանէ, քան թէ Համիդը: Քննիչները եզրիտական համակերպութեամբ տեղի տին այս պահանջներուն:

Եթէ ուրիշ նահանգներ չհետեւին Էրզրումի և Գաթիսի մոտի օրինակին, համարական ղէկի մը շուտ գուրս կելլէ այս կիճատութեան մէջէն իր անսահման ճկունութեան շնորհիւ:

Այժմ Էրզրումի մէջ թուրքերը շատ լաւ կը վերաբերին հայերուն, կը խոստովանին որ հայ տարրը թուրք տարրէն շատ կանախ զգացած է ժողովրդին վերայ ճնշող բնուր և ազատ համարձակ: Կակակառավարական նիւթերու վրայ կը խօսակցին, առանց քննելու լ տեսներէ և ուստիկաններէ: Արդեօք երկար պիտի տեսէ այս:

ԳՐՈՆԱԿ



ՆԱՄԱԿ ԼՈՆՏՈՆԵՆ

24 Յուլիս

ՏՈՒՄԿԵ ԾԻՆՔՓՈՆ

Հազիւ անցաւ երկու ամիսը այն օրէն, երբ, Ռուսաստանի խաչակիր խաչիք, Նիքօլա Յարը երկնատաք Լեռնշումով մը իջնելով Տումայի պալատը, արտասանեց հոն իր բացման ճառը:

Ատկէ ի վեր, ջղային ու շիմութեամբ մը կը դիտէր բովանդակ Արեւելքն ու Արեւմուտքը այս անզուգական պատկեր: Ոգեւորութիւնն ու քաջութիւնը անբացատրելի էին: Հսկայածաւայ կայսրութիւն մը, տուածին անգամը ըլլալով իր պատմութեան մէջ, կը զրկէր ներկայացուցիչներ՝ հոն վիճելու, փաստելու և իր ճակատագիրը լուծելու:

Ի՞նչ որ աստիճան իրականացան այս յոյսերը՝ ծանօթ է բոլոր անոնց որոնք հետեւեցան քաջ առ քաջ թէ՛ ընտրական տաճիկներուն և թէ՛ հարցապնդման աստիճանական խաւերուն:

Նախորդին մէջ՝ ցարիզը չը խնայեց ու է միջոց չեղածացնելու բոլոր անոնք՝ որոնք հսկայ անհատական ոյժ մը կը ներկայացնէին եւ կրնային հզօր պայքար մղել անիրաւութեան ու անճարակութեան դէմ:

Յաջողեցան մասամբ բայց ոչ զըլլալով: Յետոյ վրայ հասան ժողովրդէն: յայտնուած մտքերը, ծրագրերը, որոնք սարսափեցուցին պիւրօքրազիզի քացախով թթուած մեծաւորները և ահա, այն պահուն երբ ոմանք ցնորական յոյսերով կորորուէին, Նիքօլա Յարը, սեանելով թէ ներկայացուցիչները պիտանակ ինքզինքնին օրէնսգրութեան գործին նուիրելու, իրենց ընդունակութեան վեր մթնոլորտներու մէջ կը թափափուր և իր (Յարին) հաստատած օրէնքները կը քննադատեն ու կը հետապնտեն, հետեւաբար, լեզուից

խաւար և ահա մէկ ու քաղով ամէն ինչ կը խորտակուի:

Երկամեայ այնքան հզօր երկունքներով աշխարհ բերուած Տուման մեռած է այսօր:

Չարմանալի կէտ մը չկայ հոգ: Ի՞նչ թէ շատ տրամաբանութիւն ունեցող և ցարիզի ներքին կեանքին ծանօթ մէկը օրէ օր ու ժամէ ժամ կըստսէր սոյն վախճանին:

Այսօր Տումայի շէնքին դռները փակուած են, և զօրաւոր գնդերով պատսպարուած: Արտօնուած է ներս մտնել միմիայն նախագահին ու փոխ նախագահին: Փողոցները գործերով կը խոնորին, կռաւովարութիւնը ամէն նախապատրաստութիւն կը տեսնէ հաւանական պատահարներու դիմադրելու համար: Մայրաքաղաքը գրեթէ պատերազմական դրութեան մէջ է, կը յայտարարէ անզրիական մամուլը:

Նախարարապետ Գորէմիլինի հրաժարականը ընդունուած է պաշտօնապէս և ճամբու գրուած և անոր յաջորդած է ներքին գործոց նախարար Սոլոյիլին:

Ճիշտ այս պահուս արդէն համազուտար մը տեղի կունենար Մուսթաֆայի մէջ՝ ներկայ կացութեան վերջնական լուծում մը տալու դիտումով: Տումայի արտաքուտած անդամները, օգուտ քաղելով պատահութիւնէն, կը փութան Յինլանտիոյ սահմանագրուիլը՝ հոն ալ ուրիշ գումարում մը ունենալու:

Յայը, համաձայն Հիմնական Օրինակ 103 յօդուածին, լուծելով ներկայ տուեան, կը խոստանայ ուրիշ մը կազմել 1907 Մարտի սկիզբները: Աւրիշ խօսքով, մօտաւորապէս 9 ամիս Ռուսաստան պիտի գտնուի անորոշ տարածութեան մէջ, կամ մնայ Դրէքովածին ճիւղի մը ձեռքը:

Խնդրին ամենէ զարմանալի ու միանգամայն ցաւալի կէտը հոն է որ Տուման կը լուծուի այն օրը՝ երբ, իր վեց ընտրեալ անդամները ոտք կը դնեն Լօնտօն՝ մասնակցելու միմիայն:

Երբ այսպիսի թրթուռն անուշներէ վերջ, ղէմերին կը գտնեն ցուրտ, զթիւս, ահաւոր իրականութիւն, — յուսախարութիւն, անոնք սահմանուած են անպայման աղետաբեր վախճաններու:

Ոչնչի հաւասարող քննութեան մը վերջ, Անժէլի թելադրանքով Արսէն թողուց իտրիզը եւ վազանին համար ընտրուեցաւ էն ակնառու ամառանոց հանքաջրային քաղաքներէն մէկը, — Վիչի:

Հակառակ զգացած խղճախայթին, պարտաւորուած հեռագրած էր ծնողած դրամի պէտքը իր աստուան տաճանքոտ աշխատութեան վերջ հանգստանալու համար, եւ քարեմիտ մայրը, արտասուախառն նամակով, զրկելով հանգերձ պէտք եղածը, խրատած էր որդւոյն շափէն աւելի չաշխատել եւ ինքզինքը չը մաշեցնել զասերով:

Ոգոտտոսի այրող արեւը զօրաւոր ճանաչներով կը ճողազայթէր այդ օր գեղածիճաղ քաղաքին վրայ: Միջնաւոր հանգրտ լուծիւն կը սիրէր ամենուրեք, փողոց թէ գաղինօ, քոլորն ալ գրեթէ պարապ էին: Ոմանք, իրենց միջնաճաշ կանուխէն առած, մեզկ թուրիան մը ներքեւ ընկնուած, սենեկնուն մէկ հովանաւոր խորը քաջուած, փեղկերը

փակ, կը մրափէին, ուրիշներ դեռ նոր կանուխէն իրենց միջնաճաշ:

Արսէնի եւ Անժէլի սենեակը կը գտնուէր գաղինօյին վրայ նայող օթիլ մը, ուր կը գտնուէին անոնք օրուան այդ պահուն:

Արսէն խաղաղ և բազկաթոռի մը մէջ, յանցաւոր ու վշտահար կերպարանքով, բնութեան շքեղութիւնը չէր կրցած իր թախապատ արտայայտութիւնը փոխել: Օդի փոփոխումը անզօր էր իր երկու այտերուն երբեմնի կարմրութիւնը վերադարձնելու զեղքը, մեծապէս նիհարած եւ այտուկները զգալիօրէն դուս զըցուած, կարծես առաւել եւս երկարած էր: Անժէլ միեւնոյնն էր, սակայն, իր պերճ ու մարկային անհանգարտ զգայարաններուն մշտական զիմում ընող կազմով, համաշափ ու գեղազուն զիմազմներով, բարձր ու լեցուն լանջքով՝ որ վառաշ հրմայք մը ունէր վրան եւ որ այդ պահուն, աէքօլգէ թեթեւ ներքնազգեստին տակ արագ ելեւէջներ կը գործէր: Ոտքի վրայ էր էն, ու տենդալի քայլերով սենեկին դէպի երկայնքը կը քայլափոխէր անկանոն զաղարներով: Իր ու երկտասարդին միջեւ կար խոշոր բոլորակ ընկուզենի սեղան մը: վրան խառնիխուռն գիղուած լրագիրներով, հանգեսներով, գրքերով եւ այլ համանման մանր առարկաներով:

Օրիորդին քայլափոխած կողմ կը գտնուէր նաեւ մեծ հայելին, ուր կը գրեթէ ինքզինքը ամէն անգամ որ անցնէր առջեւէն եւ իւրաքանչիւր անգամ ան ինքնադիտումը կարծես եւս կը բազմապատկէր ղէմքին վրայ նշմարուող սկներեւ զայրոթը: Վերջին հեղ մը ըլլալով նորէն կանգնեցաւ հայելին առաջ, յարգարեց մագրեր, շտկեց պոլսը, ու զոգեց իր կործան վրայ գեանդուած խոշոր բաց-կարմիր վարդը եւ դառնալով Արսէնի՝ առանց ամենաթեթեւ շարժում անոր եկելի արտայայտութեան պղտուելու, յուզում մատնող ձայնով մը ըսաւ:

— Է՛ն, սեանենք, ի՞նչ որոշեցիր, ձգնաւոր ըլլալու համար չեկանք վիչի: զոնէ ես, իմ մասիս, կուսակրօն ըլլալու մտադրութիւն չունիմ: Դրամ հարկաւոր է, պէտք է գտնել: Առանց ատոր հնար չէ վայելել իսկ մեր ալ հոս գալու նպատակ է վայելել: Եթէ քու բժշկական ու փրկիսօփայական աշխատութիւնները քեզ կըստիպեն խստակեացի հովեր առնել, ես հետեւ եմ այդ անբանութիւններէն... Հարկաւոր է դրամ, հասկցա՞ր, դրամ, դրամ... — Անժէլ:... գրեթէ հեկեկած երկ-

տասարդը ու իր այդ պահու գիմազծները վշտի թաղաման արդիտի մը է՛ն կատարեալ մօտէլը կրնային հանդիսանալ:

— Ա՛յ, չեմ ուզեր պատրուակներ լսել: չեմ ուզեր պատմութիւններ... կարուկ պատասխան մը — Պիտի զրտնե՛ք դրամ, թէ՛ չ, հոգ է հարցը:

— Սիրելի իմ Անժէլ, անգին հոգեակա... նորէն միմիջեց Արսէն, այս անգամ բազկաթոռի վրայ բարձր նստելով եւ պաղատական նայուածք մը գարձնելով աղջկան: Գիտես թէ մինչեւ օրս բա՛ն մը, բա՛ն մը խնայած չեմ, բայց... բայց այս պահուս հնար չէ գտնել: Ա՛հ, սիրելիս, եթէ միայն աւելի պարզուկ վայր մը երթայինք, եթէ միայն աւելի ամօտ տեղ մը ընտրէինք, այս հոգերն ալ շինիս ունենար... Հոս ուզեցիր գու՛ն, եւ, քու սիրոյդ, չընդդիմացայ... նոյնն չեմ գանգատի միայն... ո՛հ, Անժէլ, անհնար է այլեւս ծնողացս գրել, գոնէ ատեն մը... եւ սպա երեկուան խաղը... (Շարունակելի)

բարևակենթական համագումարին ուր ներկայ պիտի ըլլան մօտ 4000 բարևակենթի անդամներ աշխարհի զանազան անկիւնի բարևակենթեբէն :

Պր. Օսգորոսքի տեղւոյ ժամանոց Ռուս Տուժարի էն Երեւելի դէմքերէն մէկը, տեսակցութեան մը առթիւ Տուժարի ներկայ լուծման մասին, կը խոստովանի ամենէ աղէտալի ճիշտութեան անհազանգը լինելը դա. և կը յայտարարէ թէ պայքարը որ անկատարի էր կառավարութեան և ժողովրդին միջև, այսպէսեւ պիտի ստանայ այնպիսի կատարելու արիւնալի երեւոյթ մը որուն նմանը տեսնուած չէ երբէք :

Իսկ գալով նոր Տուժարի կոչման, ժողովուրդը այլևս պէտք չունի ատոր : Կը յայտարարէ ան և ոչ ալ պիտի բնորէ :

Պր. Մզէտ. Ռուսական գործերու նկատմամբ ամենէ ազդեցիկ ու պատկառելի անձը, հետեւեալը կը պատասխանէ «Ճէյլի Գրօնթիլ»-ին երբ վերջինս թէլէֆօնով հաղորդելով լուրը իրեն (Լօնտօնէն բացակայ ըլլալուն համար) անոր կարծիքը կը խնդրէ :

— «Ինչ որէ ի վեր այսպիսի քայլի մը մտաւորութիւնը բոլորովին պայտէր կը կրէ պ. Սիլեստ. Այժմ ամէն ինչ կախում ունի այն կէտէն թէ՛ զինուորականներու վրայ որքան կարելի է վստահել, եթէ համաձայնին կրօնկէլի իրերու վիճակը ասան մը եւս կը քաշկոտուի. Իսկ եթէ ոչ, ճգնաժամը աւելի շուտով պիտի մերձենայ» :

Այս է անո Տուժարի կատակերգութեան վերջաբանը :

Յարգող նամակով մը պիտի զրկեմ լիովին թարգմանութիւնը Տուժարի անդամներու լոյս ընծայած մանիֆէստին, իրեն հետեւեալ իրենց վերագրել (Ֆինլանտա) ունեցած գումարումին : Իսկ Լօնտօն գտնուող անդամները այսօր, ինչպէս առաւօտեան թերթերը կը հաղորդեն, ճամբայ սլանդէպի արիւնի գաշտը, կամ, ինչպէս անգլիական Նշանաւոր օրաթերթ մը կը բանաձեռէ, դէպի «Մահուան Զորք» :

Մ. ՅԱՆԱԿ

ՀԱՍՏԱՐԱԿԱՆ ԿԱՐՍԷՆ ԽՍՏԱԿ-ԲԱՔԱ ԳՍՍՊԱՐ

Այս տիպը կրկին երեւան է եկել Ֆիլիպէի հացկատակների օրգան «ԽՍՏԱԿ» թերթի 75 թիւում : Հայհոյանքների ատարափով, կրկին, պատասխանում է մեր Պարիզում հրատարակած թուղթիկին, որից մի քանի համար ևս ուղարկված էր հովկասի խմբագրութիւններին, ինչ, այդ բարի ծաղկի հետ աւելի մօտիկից ծանօթացնելու համար : Եւ անհայտ շատ է կատարեցրել մեր կարմէնին, որի համարյոններին էլ ոչ ոք չէ հաւատում...

Այդ «յինքազը ուրիշ ճար և պատասխան չը գտնելով» ուզում է աւելորդ ես իր անունը տալով՝ իրան իբր թէ մտնել Ն.Մ. վաճառչինքազ—թուղթիկը հրատարակված և կովկաս ուղարկված է այն միջոցին՝ երբ կովկասեան մամուլը կատարեալ ազատութիւն էր վայելում. երբ գաղնակցական օրգան «Յառաջ»-ը խաժակի ա-

նունը յայտարարում էր իր ճակատին իբրև խմբագրիներից մէկը. երբ գաղնակցական վարիչները պաշտօնական բանակցութիւններով մէջ էին կառավարութեան հետ, երբ Գաղնակցութեան պիւնուրները իրենց նշաններով և կառավարչապետի գիտակցութեամբ թիֆլիզն էին պաշտպանում, երբ խոստիստներ իր «Գաղնակցական հոշակաւոր ճառն էր արտասանում Ռուս պալատում... Այժմ է Գաղնակցութեան դրամներից աւելան արբենալ որ այդպիսի շարժատունութիւնները զիջելու գաւարէն կարմէնից էլ վար լինել կը նշանակէ... եղաւ գնաց... մատնել է... լրտեսում է... Վարդօն — ո՞վ հաւատաց...

Խաժակը ձուկի գլուխն է բռնել!!!... պարծենում է... բունը օլիւնը պիւնը կուզէ!!! ի՞նչու պատուովում է... օտակէք էլ մինչեւ ընդհանր ժողով չը լինի մինչեւ ես այնտեղ ներկայ չը լինեմ... ստուգեմ մի լիտները հաշիւը ձեզ գրամ չը կայ, բաւ է ինչ որ թաւանցիք, կողոպտեցիք խեղճ ժողովրդին, հաշիւը ամենքի կողմից պէտք է լինի, կանոնաւոր հաշիւ... հասկանում էք թէ ո՞չ :

Այդ կարմէնը խոստանում է այլևս իմ հասցէին բան չը գրել... այդպէս, պիւնութեան եղիր... դա արհամարանք չէ, այլ զինաթափութիւն. իսկ ես կը շարունակեմ հայցել մի կ'օրենքին շարժամարել և միշտ խարազանել որ օձի պէս գալարվեն...

ՎԱՐԴՕ

«ԴՐՕՇԱԿ Ի ԱՐԳԵԼՈՒՄԸ ԿԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ

Վերջին րօպէին տեղեկութիւն ստացանք, որ «Դրօշակ» մտաքը արգելւած է ամբողջ Պարսկաստանում : Անա պաշտօնական կարգադրութեան հարազատ պատճէնը :

Փոստային վարչութիւն
Փոստերի եւ մաքսատների ընդհանուր պ. վերատեսչին
3 յուլիսի 1906 թ. 319
Թէհրան

Պատիւ ունիմ ձեզ ծանուցանելու, որ կառավարութիւնը արգելեց մատուցել տարածումը Պարսկաստանում հայ «Դրօշակ» րրագրի, որ խմբագրւում է ժընեվի միջև հայ յեղափոխական կոմիտէի ջանքերով :

Ինչ կը բարեհաճէք ուրեմն հրահանգ տալ ձեր տեսչութեան ներքոյ գտնուող դրամատները՝ որ այդ րրագրի համարները գրաւուեն և ձեզ ուղարկեն : Այդ օրինակները պիտի ոչնչացունեն ձեր ներկայութեամբ և պէտք է կազմել արձանագրութիւն՝ ընդունւած ձեռով :

Նոյն արգելումը վերաբերում է եւ այլ եւ այլ յեղափոխական րրօշիւրներին հայերէն լեզուով, որոնք մի քանի ժամանակից ի վեր մտցնում են Պարսկաստան՝ բաւական մեծ քա-

նակութեամբ : Այդ րրօշիւրները պէտք է ենթարկեն նոյն վիճակին, ինչ եւ «Դրօշակ» :

Ի դիմաց մաքսային եւ փոստային միութարի՝ Ընդհանուր գանձարանի կառավարիչ
(Ստորագրութիւն)

Պարսից իշխանութեան այդ անտեղի չը մտածած և անարգար կարգադրութիւնը մի օր գանի վերաբերմամբ, որ 16 աւրոյց ի վեր պատ մուսք սենի այլ տեղ, և որը երբէք չէ զբոսել այդ երկրով և նրա կառավարութեամբ—միայն մի բացատրութիւն ունի, այն՝ որ այդ կարգադրութիւնը տեղի է ունեցել ցարի կառավարութեան ճշման տակ և նրա պահանջմամբ : Մենք հաստատ և գաղտնի տեսչութիւն ունենք, որ այդ արգելման մասին գիտումն է եղել թէ՛ հրան գեռ անցեալ տարի յունիսին՝ առիթ բռնելով 1905 թիւ «Դրօշակ» թիւ 5-ը, ուր գտնուած են խիստ յօգեածներ ցարական բեթմի գէմ : Եւ կամենալով հասնել լինել թէ՛ հրանի առաստացի սպանութեան՝ պարսից իշխանութիւնը հրամայում է բռնել և այրել «Դրօշակ» և «Դրօշակ» խմբագրութեան բոլոր հրատարակութիւնները, մինչդեռ նոյն երկրի մուսք ունին եւրոպական և ռուսական մեծ տեսակ թերթեր...

Եւ իլրումն այս կարգադրութեան, թաւրիզում, ինչպէս մեզ հնազարում են այնտեղից, արգէն զբաւեց և այլեց «Դրօշակ» վեյլին՝ 6-րդ համարը, ամբողջ կապոցներով, նոյնը և սահանագլխի մի քանի այլ քաղաքներում :

«Դրօշակ» երբէք մուտք չուներ թիւրքիա, — դա բնական է նրա մուտքը արգելւած է և Ռուսաստան, նոյնիսկ հոկտեմբերեան կոմիտէի մանիֆեստից յետոյ — այդ էլ հասկանալի է ինչպէս արգէլը դնել և Պարսկաստանի համար — դա մի կարգադրութիւն է, որի հետ մենք հաշուել չենք կարող և չենք ուզում :

Այժմագրելով այս փաստը, «Դրօշակ» խմբագրութիւնը միամտանակ հարկաւոր դատեց զիմէ թէ՛ հրան՝ պարսից բարձր կառավարութեան, որոգեք լսվ յիշեալ կարգադրութեան դէմ :
«ԴՐՕՇԱԿ»

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կառավարութիւնը ամէն տեղ խիստ միջոցներ ձեռք առած է որ հակառակական ցոյցերը բռնութեան կերպարանք չստանան : — Յոյն կառավարութիւնը, ինչպէս կը հաղորդեն պուլկար թերթերը, որոշած է պուլկար կառավարութեան հինգ միլիոն

Փասակ մուգանք պահանջել ի վարձատրութիւն ցոյցերու միջոցին զի ստուած յոյներու :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սուլիթանը համաձայնած է որ Սամսո կղզիին կառավարիչը հեռանայ որուն դէմ կղզեցիները կը րոպէէին և հեռացումը կը պահանջէին :

— Թոք շրջանակներու մէջ շատ կը վախնան ռուսներ — պուլկարական մերձեցումէ, Բարձրագոյն յոյներուն խորհուրդ կուտայ զիջողութիւններ ընել Ռուսմանոյ այդ մերձեցման առջեւը առնելու համար որ թէ՛ թուրքիոյ և թէ՛ Ռուսաստանի համար վտանգաւոր կընդունուի :

— Պոլսոյ զեսպանական շրջանակի մէջ Պուլկարիոյ մէջ տեղ ունեցած հակառակական ցոյցերը մտատանջութիւն կը պատճառեն : Կը վախնան թէ պուլկարները սմբողջ յոյն հոգեւորականութիւնը իշխանութեան վաճառել կամենան :

— Յուլիս 20-ին Պոլսէն կը հարգորդեն «Մէջէն» ինքնապաշտութիւնը : Սոյն ազդեցիկ կիթանանք որ Սուլիթանը ստամոքսային ծանր ցաւեր ունի : Վերջին Սէլամըին քանի մը դիւանագետներ ընդունած ատեն այնքան ծանր ցաւը քսած է որ չէ կրցած շարունակել ունկնդրութիւնը :

— Պուլկար և թերթական յաճախականական գաշինքի խընխիւրը բարգուճցաւ Պուլկարիոյ քանի մը նոր պահանջներուն առիթով :

ԹՈՒՍԻԱ

Սաէսայի և Պոլսոյ նաւային հաղորդակցութիւնը դադարած է առաջինի մէջ մեծ խոռովութիւններ ծագած ըլլալու պատճառով : — Յայտնի երեսփոխան Հէրցէնչիթան, հրէա, անձանօթի ձեռքով սպանուած է :

— Ֆինլանտիոյ Սվեդապուրկ քաղաքին պիւնուորական խոռովութիւնը ծանր կերպարանք կառնու լուր կայ թէ ամբողջին հրամաճատարը և մի քանի սպաներ սպաննուած են : Խոռովարները իրազէն կը պարպեն ուս պատերու վրայ և Երեւանի դէմ երկաթուղային հաղո, գակցութիւնը ընդհատուած է, այդ պատճառով ստոյգ տեղեկութիւններ կը պակսին :

— Երեւանից կը հնազարեն թէ Սորը երկու ժամ տեսակցութիւն ունեցեր է Ամբրիկեան զեսպանին հետ և յայտնեց թէ՛ ինք հաստատ որոշած է Ռուսիան սահմանադրական երկրի վերածել :

Печатница на П. Глушковъ С Вар.